


Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք:

ԱԴՐԵՆԱՏԴՈԲԾԿԱՄԻ ԿԱԶՄՔԱԺԻՆ

ԱՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՆԴԻՐՆԵՐԸ

1934 թվ
ԳԱՐԱՆՑԻՆ
ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՑՈՒՄ

БИБЛІОГРАФІЧНА
ІНСТИТУТА
ПЕРШОГО ДІЛЕННЯ
Академії наук
ССР



Գիւղական - ԲՈՒԺՈՒ - 1934

2802-10

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացնեք.

34-И
Ա 648
338.38
Ա-21

ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

1934 թվի
ԳԱՐԱՎԱՅԻՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՎԱԿԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ



Ազերները — ԲԱԴՈՒ — 1934

31.895

«Գյուղական տնտեսության հերական խնդիրներից մեկն է հանդիսանում նողագոր-
ծության բոլոր նյուղերում կանոնավար ցանք-
սափոխության մասնելը, մասուր հերկերի ծա-
փալումը յեվ սերմային զործի լավացումը»:

ՍՏԱԼԻՆ—Քաղնաւվետուրում
XVII համագումարում



61043-67

«Տեխնիկական կուլտուրաների բերքատվա-
յան բարձրացման խսկական միջոցներից մեկն է հանդիսանում—նրանց պարագաներուով
մատակարելը»:

ՍՏԱԼԻՆ—Քաղնաւվետուրում
XVII համագումարում:

«...Բանը միայն խորհուրդների մեջ չե՞
ինչպես կազմակերպության ձեվ, բեպեսեվ
հենց ինքն այդ ձեվը, ներկայացնում է բարձ-
րագույն հեղափոխական նվաճում: Բանը
նախ յեվ առաջ խորհուրդների աշխատանքի
բովանդակության մեջ ե, բանը խորհուրդների
աշխատանքի մեջ ե, բանը նրանումն ե, թե
հատկապես ով է դեկավարում խորհուրդները
—հեղափոխականները թե հականեղափոխա-
կաններ»:

(Ընկ. ՍՏԱԼԻՆի նաոյից Համկոմկուսի
(բ) Կենտկոմի յեվ Կենտրոն. Վերահսկիչ
Հանձնաժողովի նունշարյան միացյալ
պլենարում—1933 թ.):

Գյուղական տնտեսության վերելքում գարունը
հանդիսանում ե տարվա վճռական ժամանակը,

Գարնանը մեղ մոտ ցանում են բամբակ, քենափ,
ծխախոտ, կտավատ, արևածաղիկ: Ցանում են չալթուկ,
ցորեն, գարի, հաճար, կերային խոտեր: Գարնանը
վերակենդանանում ե շերամի վորդը: Գարնանը մեծ
աշխատանքներ են տարվում այգեգործության զար-
դացման և ամրապնդման համար: Գարնանը տարվում
ե բեղմնավորման կամպանիան, վորից կախում ունի
անսասունների հոտի բազմանալը:

Հնթացիկ տարվա գարունը պետք ե ամուռ հիմք
գնի մեղ մոտ արևադարձային կուլտուրաների—կիտ-
րոնի, նարնջի, մանդարինի, զաֆրանի, նուռի, թզի
և այլն լայն զարգացմանը:

Այդպիսով, գարնանսային գյուղատնտեսական կամ-
պանիան - դա տնտեսական-քաղաքական կարևոր կամ-
պանիա ե և նրա հաջող անցկացնելուց կախում ունի
և գյուղական տնտեսության զարգացումը՝ և կոլխոզ-
նիկների ու աշխատավոր մենատնտեսների բարեկե-
ցությունը:

ԻՆՉ ՊԻԾԻ ԳԻՏԵՆԱ ՈՒ ՃԻԾԻ ԳՅՈՒՂԱՍՈՐՃԻՒ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅԴ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼԻՍ

Գյուղխորհնդի նախագահը պետք է զիտենա յեվ հաստատ հիշի նետեվյալը.—

Ա.Ռ.Ա.ԶԻՆՔ—վոր հառաջիկա գարնանային ցանկային կամպանիան հանդիսանում է այն մեծ գործերի մասնիկը՝ վորը պետք է իրագործվի յերկրորդ հետապնդակում, վորպեսզի նրա վերջում հասնենք կապիտալիստական տարբերի վերջնական վերացւանը յեվ դասակարգերը ընդհանրապես, յեվ լիովին վոչնչացնել այն պատճառները, վորոնի ծնում են դասակարգային տարբերությունը յեվ շահագործումը ԽՍՀՄ-ում:

Գարնանային գյուղատնտեսական կամպանիայի հաջող տանելուց կախում ունի շատ բան: Դրանից կախում ունի, մասնավորապես, թե վորքան հաջող կերպով մենք կիրագործենք յերկրորդ հնգամյակի շրջանական պատճառը և արագ ու վճռականորեն կերպով դեպի անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը:

ՅԵՐԿՐՈՐԴ—վոր պետք եւ հիշի գյուղխորհուրդը դա այն ե, վոր վերակառուցման կազմակերպչական ժամանակաշրջանը և մենատնտեսական գյուղական տնտեսության նոր կողմողային ոելուների վրա դնելն արդեն ավարտված ե, վոր—

«Բատ եյության հաշվետու շրջանը գյուղատնտեսության համար յեղել ե վոչ այնքան արագ վերելքի և արագ առաջընթացման շրջան, վորքան մոտ ապագայում այդպիսի թափի համար հախաղրյաներ ստեղծելու շրջան»:

Այդպիսով, 1934 թ. գարնանային գյուղատնտեսական կամպանիան պետք եւ սկիզբ լինի գյուղական տնտեսության արագ վերելքի ու հզոր զարգացմահամար: Եթե հենց նրանից, —թե գյուղխորհուրդներն ինչ չափով կարող են զիմավորել և հաջողությամբ անցկացնել գարնանային կամպանիան — կախում ունի գյուղական տնտեսության վերելքը և արագ առաջընթացումը մոտիկ ապագայում, — այսինքն, այն ինչի մասին խոսեց ընկ. Ստալինը XVII կուսհամագումարում:

ՅԵՐԿՐՈՐԴ—վոր պետք եւ հիշի գյուղխորհուրդը, այդ այն ե, վոր սոցիալիզմի կառուցումը գյուղում գնացել և դեռևս գնացու ե գասակարգային խիստ պայքարի պայմաններում և վոր առաջիկա գարնանային գյուղատնտեսական կամպանիան նույնպես բնրանալու ե դասակարգային պայքարի պայմաններում՝ բարձր բերատվության, բարձրակի, անասարուծության վերյելի, սոցիալիստական գյուղական տնտեսության համար:

Կուլակը թեպետև ջախջախված, բայց դեռ չի վոչընչացված: Կուլակը խորամանկ ու ճկուն թշնամի ե, նա հասկացավ գյուղում նոր կագերի ուժն ու հզորությունը, վերակառուցվեց, փոխեց իր տակտիկան — կոլխոզների դեմ ուղղակի հարվածից նա անցավ ականափոր աշխատանքի» (ԱՏՍ.Լ.Ի.ն):

Կուլակը դիմակավորված նստած ե կոլխոզում կամ խորհրդում, և սպեկուլյացիայի ե յենթարկում մերժամանակավոր դժվարությունները, գյուղխորհրդի կամ կոլխոզի վարչության չնչին սիւանները: Նա ոգտագործում ե կոլխոզնիկների մանր սեփականատիրական սովորությունները, ագիտացայիա և մզում ու սարսոտաժի յենթարկում կուսակցության և կառավարության կարևոր միջոցառուները, սաբուտաժի

և յենթարկվում ցանքսը, մսամթերումները և այլն։ Նա կազմակերում ե վնասատվություն, կոլխզներում, սովորություններում և ՄՏԿ, թալանում և գողություններ, վատնումներ։

Իր քայլայիշ աշխատանքը կուլակը միշտ ինքը չի կաարում, այլ շատ հաճախ իր գործակալների նրա ազդեցության տակ գտնվող գյուղացիների միջոցով, հակահեղափոխական կուսակցությունների մասցորդների-դաշնակների, մուսավաթիստների, մենշվակների ու ես-երների ոգնությամբ։ Այդ լավ պիտի հիշի գյուղխորհուրդը։

Գյուղխորհուրդը պետք ե հիշի, վոր հառաջիկա գարնանացանի կամպանիայի հաջողությունը շատ բանով կախում ունի նրա աշխատանքի վորակից ու բնավորությունից, նրա դեկավարության վորակից, նրա դասակարգային զգնության յեվ պայքարելու ընդունակության աստիճանից, նրանից, թե վորչափ արագ և վճռողականապես գյուղխորհուրդը կարող ե մերկացնել կուլակի և յենթակուլակի զագիր նենդությունները։

ԶՈՐՈՐԴԻ. — և կարևորագույնը, վոր պետք ե հիշի գյուղխորհուրդը, այն ե, վոր հիմա, յերբ «կոլխոզները հաղթանակեցին վերջնականապես և անվերադարձ» (Ստալին), յերբ Ս. Պ. Բ. ջանի գյուղական տնտեսությունը զինված ե մեծ քանակությամբ մեքենաներով, գյուղական տնտեսության գործիքների ու արակառների մեծ քանակություն ակոսում են սոցիալիստական դաշտերը — այժմ գյուղի դեկավարության զըլիսավոր խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի բոլոր կազմակերպությունները կազմակերպի յեվ գլխավորի կամպանիան մասսաների ու աշխատավոր մենատների ակտիվությունն և աշխատավորական ստեղծա-

գործող ենասուզիազմը և այդ ակտիվությունը ուղղի գյուղում տնտեսական - քաղաքական կամպանիանը հաջող անցկացման վրա։

ՀԻՆԳԵՐՈՐԴ. — թե ինչ պտի հիշե ամեն մի գյուղիորհորդ — դա այն ե, վոր —

«1934 թ. գարնանային գյուղատնտեսական կամպանիայում կենտրոնական խնդիրն ե հանդիսանում կոլխոզների հետագա կազմակեպչատնտեսական ամրապնդումը, գյուղատնտեսական աշխատանքների ամենայն կերպ բարձրացումը և բերքատվության ավելացումը՝ աշխատագործենական-քաղաքական ազդեցությամբ և ղեկավարությամբ ընդգրկումը և բոլոր կազմական պայքար ընկ Ստալինի «բոլոր կոլխոզները բոլցնիկական, իսկ կոլխոզնիկներին ունենալու գարձնելու» պայմանները լիովին իրագործելու համար։

(Ս.ՍԽՀ ժողկությունի յեվ Ադրենակուսի (թ) կենտրոնի 1934 թ. հունվարի 22-ի «1934 թվի գարնանային գյուղատնտեսական կամպանիայի պլանի մասին» (Վորուսումից):

Իսկ ինչ վերաբերվում ե բամբակաբուծական ռայուղիորհորդներին, հապա նրանք բացի դրանից պետք ե իմանան, վոր Ս.ՍԽՀ. ում բամբակի ցանքսի տարածությունը 1934 թ. թողնված ե նույն չափով, ինչպես յեղել ե 1933 թվին — 191,000 հեկտար։ Բայց այդ տարածությունից մենք պետք ե տան վոչ թե 127,000, այլ 150,000 տոնն բամբակ։ Դա պարտավորեցնում ե բամբակաբուծական ռայունների գյուղխորհորդներին բացադրություն գարձնել բամբակի դաշտերի բերքատվության համար տարվող

պալքարին։ Դրա համար ել հառաջիկս բամբակային կամպանիայի նիմնական յեվ կենտրոնական խճնդիրն ե հանդիսանում—ամրապնդել 1933 թ. բամբակային կամպանիայում ձեռք բերած հաջողություն։ ները յեվ բոլցեվիկորեն համառ պայման սղել բամբակի բերքատվության հետագա բարձրացման համար։

ԻՆՉ ՊԵՏք Ե ԱՆԻ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԸ ՎՈՐՊԵՍ- ՁԻ ԱՊԱՀՈՎԻ 1933 Թ. ԳԱՐՆԱՆՑԱՆԻ ՀԱԶՈՂ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Գարնանային կամպանիայում գյուղխորհուրդների մարտական խնդիրն ե հանդիսանում կոլխոզների բոլշևիկյան ծավալւն կազմակերպչա-տնտեսական ամրապնդումը, պայքար բոլշևիկյան կոլխոզների համար, կոլխոզային ունեոր, կուլտուրական կյանքի համար։

Այդ ուղղությամբ ի՞նչ ե անելու գյուղխորհուրդը։

Ա.Ռ.ՋԻՆ—ոգնել կոլխոզների արտադրական պլանների կազմելուն յեվ հասցնել այդ պլաններն մինչեվ առանձին բրիգադներն ու բրիգադիրներին։

ՅԵՐԿՐՈՐԴ՝ ձեռք բերել կոլխոզներում աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

Այդ բանը գյուղխորհուրդը կարող ե ձեռք բերել կոլխոզներում աշխատանքային կարդապահության ամրապնդման միջոցով, գործարքայնի արմատավորելով, աշխատանքի ճշգրիտ հաշվեառով, հավասարանքի փերացումով և այլն։

ՅԵՐԿՐՈՐԴ—ոգնել բրիգադաների, ագրոստարոստաների, հաշվեառողների, ջրողների, ցանողների և ուր։— կանոնավոր ընտրությանը և մասսայական փորակագորման կադրերի նախապատրաստմանը։

ՉՈՐՐՈՐԴ—պատգամավորների խմբակի միջոցով աճեցնել կոլխոզային ամուր ակտիվ և նրանց միջո-

ցով գյուղխորհուրդները պետք ե վճռականապես մաքրեն կոլխոզները կուլտակային տարրերից, գողերից, ժուլիկներից և ուր։

2. Գյուղխորհուրդը պատգամավորների խմբակի միջոցով պետք ե աջակցի սովորողների և ՄՏԿ-ների աշխատանքներին։ Առանց խառնվելու սովորողների և ՄՏԿ-ների վարչությունների ողերատիվ ֆունկցիաներին, գյուղխորհուրդը ամեն կերպ պետք ե աջակցի սովորողներին ու ՄՏԿ-ներին՝ նրանց պլանների իրագործմանը, աշխատանքը կազմակերպի ընկ։ Ստալինի 6 ցուցմունքների հիման վրա, առանձնապես ուշադրություն դարձնելով սովորողների կողմից կոլխոզների հետ՝ վերջինի կողմից բանուժ տրամադրելու պայմանագրերի կնքելուն, սովորողների ու ՄՏԿ-ների սոցիալիստական սեփականության պահպանմանը։

Սովորողների ու ՄՏԿ-ների քաղբաժինները կարձամանակվա գոյության ընթացքում խոշոր աշխատանք տարան կոլխոզների, սովորողների ու ՄՏԿ-ների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման համար, ապահովեցին նրանց կողմից իրենց պլանների և պրոլետարական պետության հանդեպ ունեցած պարտավորությունների իրանցնելուն, քաղբաժինները անխնայորեն մերկացնում և արմատախիլ են անում անբան թափառումը, անփութությունը, անպատասխանատու վերաբերմունքը դեպի արդունաբերությունը, մերկացնում ու վերջ են տալիս սովորողներում, կոլխոզներում և ՄՏԿ-ներում յեղած մասսատվությունը, մաքրում են կոլխոզներն ու սովորողները դասակարգային թշնամիներից։

3. Գյուղխորհուրդները մասսայական աշխատանք պիտի ծավալեն քաղբաժինների կողմից աարվող մի-ջոցառումների շուրջը, կապակցելով իրենց աշխա-

ամենը նրանց հետ, ամենայն կերպ աջակցելով քաղ-
բաժիններին՝ նրանց խնդիրների հաջող իրացնելուն։

Մենատնտեսը մեզ մոտ Աղբբեշանում գյուղական
տնտեսության մեջ զեռևս մեծ դեր ե խաղում, այդ
իսկ պատճառով գյուղխորհուրդը պետք ե ոգնի աշխա-
տավոր մենատնտեսին, վոր նա հառաջիկա գարնա-
նային կամպանիայի ժամանակ լավ կազմակերպի իլ-
արտադրությունը, բարձրացնի այդ արտադրության
վորակը, պետք ե ապահովի աշխատավոր մենատն-
տեսի կողմից ցանքսի, բերքի բարձրացման համար
վերցրած պարտավորությունների կատարելը, սիս-
տեմատիկ կերպով լայն կազմակերպչա-արտադրական
ոգնություն ցույց տա, կազմակերպի նրանց տասնա-
ծուսների, վորպեսզի հնարավոր լինի ել ավելի լավ
դեկավարել ու ոգնություն ցույց տալ նրանց։

Դրա հետ միաժամանակ գյուղխորհուրդները պետք
ե հաշվի առնեն աշխատավոր մենատնտեսների կող-
մից կոլխոզ մտնելու ձգտումը և ապահովեն կոլխոզ-
ներում, լավագույն, արտադրության մեջ ստուգված
առաջավոր աշխատավոր մենատնտեսների ընդունե-
լուն, վճռական պայքար մղեն կոլխոզներում կուլակ-
ների ու խորթ տարրերի ներս խցկելու դեմ։

4. 1934 թվի գարնանացանի կամպանիայի հաջո-
ղության և նրա կենտրոնական խնդրի իրագործումը՝
պայքար բերքատվության հետագա բարձրացման հա-
մար—ամբողջովին կախում ունի նախապատրաստա-
կան աշխատանքների իր ժամանակին ու ամբողջովին
տանելուց։

Գյուղխորհութիւն մարտական խնդիրն ե հանդիսա-
նում—ապահովել այդ միջացառումների տանելը վո-
րոշված ժամկետում; այն ե.—

Փետրվարի 10-ից վոչ ուշ—գարնանային կամպա-
նիայի պլանները հասցնել կոլխոզներին և ամեն մի
մենատնտեսին, հանձնել ցանքսի պլանը, ապահովելով
մինչև այդ ժամկետը՝ պլանների լայն քննարկումը։

Անմիջապես կազմակերպել բոլոր կոլխոզներուն
ու մենատնտես աշխատավորական տնտեսություն-
ներում կենդանի քարշառումի դրության ստուգում,
նրանց կերով և լծասարքով ապահոված լինելը, վերց-
նել անդիմությունը և խիստ պատասխանավորություն
սահմանել աշխատավոր կենդանիների խնամելու գոր-
ծի համար, սահմանել աշխատավոր կենդանիների հա-
մար յերկարթյա պարտադիր հանգիստ և կերպարում
նախքան գարնանային դաշտային աշխատանքները։

Անմիջապես առանձին գյուղերի ու կոլխոզների
հանձնել հանքային պարատանյութերի ու գոմաղթե
պլանը և անմիջապես աշխատանք ծավալել պարա-
տանյութը դաշտ տեղափոխելու այն հաշվով, վոր-
պեսզի մինչև մարտի 20-ը ապահովվի պլանով վորոշ-
ված տարածության վրա պարատանյութը հողի հետ
խառնելու աշխատանքների ավարտումը։

Փետրվարի 10-ից վոչ ուշ պատգամավորական խըմ-
բակների միջոցով ապահովել արտադրական-ֆինան-
սական պլանների կազմումը կոլխոզներում և արտա-
դրական առաջադրանքների հանձնելը բրիգադներին՝
նախորոք քննարկելով այդ պլանները կոլխոզներին
և սովորողների ու ՄՏԿ բանկորների արտադրական
խորհրդակցություննում։

Մինչեւ մարտի 1-ը—անպայման ապահովել ցանք-
սափոխություն կատարելու հետ կապված բոլոր աշ-
խատանքները, այնպես, վորպեսզի մարտի 25-ից
վոչ ուշ լիովին ավարտվեն արգույտի և վիկի ցանելը։

Կուսակցությունը և կառավարությունը մատնաշնուր են ցանովի խոտերի կուլտուրայի բացառիկ նշանակությունը՝ ինչպես կերային բազայի ամրապնդման և անսամարուծության զարգացման, նույնպես և բամբակաբուծական ուայոններում փաստորեն ցանքսափոխություն մտցնելու գործում։

Անցյալ տարի առվույտի ցանքսը խափանվեց սերմի բացակայության պատճառով։ Այս տարի առվույտի ու վիկի սերմեր բավականաչափ ցանված են։

Գյուղխորհուրդների նախագահների վրա անձնական պատասխանատվության ե դրվում ցանքսի, վառագման եր ժամանակի կատարելու համար և բարեխիղճ խնամք առվույտի ու վիկի ցանքսերի վերաբերմամբ։ Դրան նույնչափ ուշադրություն պետք ե դարձնի, վորչափ վոր դարձվում ե բամբակին, և կերային խոտերի պակաս ցանելու, չորացնելու և ցանքսերի վոչչացնելում հանցավորները պատասխանատվության կկանչվեն։

Գյուղխորհուրդների նախագահներն ու գյուղխորհուրդները ամբողջովին պետք ե հասկանան, վոր ցանքսափոխությունը 1934 թվի բամբակային պլանի բաղադրիչ մասն ե։

Մինչեվ մարտի 1-ը՝ լիովին ավարտել գութան ների, ցանիչների, տափանների և գյուղատնտեսական ինքնուարի նորոգումը կոլխոզներում և անհատական տնտեսություններում, ամեն կերպ աշխատելով վըճռական բեկում առաջ բերել աշխատանքի այդ հետամաց տեղամասում։

Մինչեվ մարտի 1-ը ավարտել տեղերում վոռոգման պլանների կազմումը՝ ըստ բոլոր կուլտուրաների։

Գյուղխորհուրդները պետք ե հաստատ դասակարգային դգոնություն հայտնաբերեն ջրոգտագործման

գործում, հիշելով, վոր կուլակը իր նենգությունները հրապարակ կանոնի հասկապես այդ տեղամասում։

Գյուղխորհուրդները պետք ե կազմակերպեն կանոնագոր վոռոգումն, թույլ չտալով այնպիսի խայտառակ փաստեր, յերբ ջուրը ծածկում ե բամբակի ամբողջ դաշտերը և վողողում ե ճանապարհները։

Նման վոռոգումներից փչանում են ճանապարհը ները, իսկ դաշտերի խորը տեղերում առաջանում են յերկար չչորացող ճահիճներ, ուր այլևս ցանել անհարելի յեւ։

Վոռոգման պլանները պետք ե կազմվեն գյուխորհուրդի կողմից ամեն մի բնակելի կետի համար առանձին, փաստորեն հասցնելով այն մինչև ամեն մի կոլխոզ և ջրոգտագործող աշխատավոր մենատնտեսին։ Այդ պլաններում գյուղխորհուրդները պետք ե նախատեսեն վոռոգումն սկսելու և ավարտելու հաստատ պլանները ամեն մի կոլխոզի, գյուղի, աշխատավորական տնտեսությունների համար։

Փետրվարի 15-ից մինչյեվ մարտի 15-ը անցկացնել վոռոգման սիստեմի մաքրման և ջրային մանր ցանցի կանաչների ու արխերի կանոնավորելու միամսյակ։

Համահավասար չափով գյուղխորհուրդները պետք ե ոգնեն ջրհանների իր ժամանակին նորոգմանը և վնասվելու դեպքում ապահովեն նրանց արագ նորոգումը, ոգնելով մեքենաների փչացած մասերը անմիջապես նորոգման արհեստանոցները տեղափախելուն։

Մինչեվ մարտի 15-ը լիովին մաքրել թփուտներից՝ 1934 թվի նոր հողամասերը, Դա վերաբերում է այն գյուղխորհուրդներին, վորոնց 1934 թվի բամբակի կամ ուրիշ կուլտուրաների համար նոր հողամասեր են տրամադրված։

Մարտի 20-ից վոչ ուժ - ավարտել 1934 թվի
բոլոր բամբակային հողամասերի հերկելը։ Այդ միջո-
ցառումին գյուղխորհուրդները պետք ե լուրջ ուշա-
դրություն գարձնեն, վորովհետև 1934 թվի բամբա-
կինու աշնանացելը բավականաչափ թերակատար-
ված եր:

Մինչեվ մարտի 20-ը՝ լիովին ավարտել բամբակա-
բույժներին բամբակի սերմ բաշխելը՝ ապահովելով
մինչև ապրիլի 20-ը բամբակենու սերմի ձեռքով
զտումը՝ ինչպես ամերիկական, նույնպես և յեգիպ-
տական տեսակները:

Հացահատիկային ռայոններում (չալթուկ, ցորեն,
գարի, կորեկ և այլն) գյուղխորհուրդները պետք ե
անմիջապես բոլոր խորհուրդներում կազմակերպեն
սերմային ֆոնդերի պահպանման գործի ստուգում,
ցանքսային նյութերի վորակը (աղտոտվածությունը,
ծերու ընդունակությունը) մթերված սերմացուի ֆոն-
դերը, գտումը, հետագայում՝ սիստեմատիկ կերպով
ստուգման յենթարկել սերմացու հատիկների վորակը
և պահպանվածությունը:

ՀԱՐԱՁԻԿԱ ԳԱՐԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԲՈԼԵՅԵՎԻԿԱՅԱՆ ՀԱՄԱՌ ՊԱՅԱՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղխորհուրդները պետք ե լավ հիշեն, վոր
բերքատվության բարձրացման վճռական լծակը հան-
դիսանում ե ազգութեանիկան, պայքարը ազգութեանի-
կական բոլոր առաջադրանքների անցկացնելու համար։

Դրա համար գյուղխորհուրդները պետք ե վճռա-
կանապես վերակառուցեն իրենց աշխատանքները,
վոչնչացնեն գործնական աշխատանքում անշարժու-

թյունը, հետամնաց հայացքները, կուլտակային սաբո-
տաժը, պարարտանյութերի նշանակության թերա-
գնահատումը, լիովին և իր ժամանակին կատարեն
հանքային պարարտանյութերի և գոմաղբի խառնելու
պլանային առաջադրանքը և լիովին ոգտագործեն
գոմաղբի բոլոր պաշարը։

Բերքատվության բարձրացման համար խոշոր նը-
շանակություն ունի ցանքսի նորման և ցանքսի
ժամկետները։ Գյուղխորհուրդները այդ բանին պետք
ե հատուկ ուշադրություն դարձնեն, թույլ չտալով
ցանքսի վորևե ուշացում։

Բամբակի բերքատվության բարձրացնելու համար
գյուղխորհուրդները պետք ե պայքարեն աղբօնումիա-
կան հետեւյալ հիմնական միջոցառումների իրագործ-
ման համար։

Հանքային և գոմաղբային պարարտանյութերի լայն
կերպով գործադրման համար։

Ցելի իր ժամանակին ավարտելու 18-20 սանտի-
մետը խորության վրա (քառորդ արշին) — խորության
ճշտությունը սառուցելու համար գյուղխորհուրդի նա-
խագահը ինքն ե անձամբ դիտելու։

Զմեռային արաթի պահպանելու համար։

Զվոռողած աշնանավարի տափանելու համար։

Զմեռային արաթի ամբողջ տարածության տա-
փանելու համար, մոլախոտերի դեմ պայքարելու ծան-
րությունը՝ նախացանքսային շրջան տեղափոխելու
համար։

Դաշտերը թփերից մաքրելու համար։

Ցանքսափոխության մտցնելու համար։

Ցանքսի նորմաների պահպանման և շարքացանի
համար։

Օանքսի ճշգրիտ ժամկետների պահպանման և
բամբակի ցանքսի սեղմած ժամկետում — ապրիլի
17-20-ից մինչև մայիսի 5-ը կատարելու համար:

Նման ագրոնոմիական միջոցառումները համապա-
տասխան կերպով պարտադիր են և վոչ բամբակային
ռայոնի գյուղաբնուրդների համար:

Ագրոնոմիական միջոցառումների հաջող անց-
կացնելու համար գյուղաբնուրդները պետք է ապա-
հովեն ագրոտեխնիկապահպանդային լայն մասսայական
ծավալումը կոլխոզներին ու աշխատավոր մենա-
տնտեսների մեջ:

Այդ գեպքում պետք է հաշվի առնվեն անցյալ
տարվա խոշոր սիսակներն ու թերությունները ագրո-
տեխնիկական առաջարանքների իրացման գործում,
վորի հետևանքով, մասնավորապես, բամբակի վերա-
բերմամբ, չեյին ոգտագործված բոլոր հնարավորու-
թյուններն ել ավելի բարձր բերք ստանալու համար:

Գյուղխորհուրդներն անմիջապես պետք է մշակ-
ման յենթարկեն Ռայգործկոմների կողմից հրապա-
րակած պարտադիր ագրոկանոնները և ագրոնոր-
յադները բոլոր կոլխոզներում և բրիգադներում: Բո-
լոր գյուղաբնուրդներում կազմակերպել վորակի
տեսչություն, իսկ կոլխոզներում և բրիգադներում
ագրոհսկողության հանձնաժողովներ, նրանց վրա պար-
տավորություն դնելով՝ ագրոմիջոցառումների ամեն-
որյա գործնական կիրառումը:

Բամբակենու բերքատվության բարձրացման գոր-
ծում վճռական մոմենտներից մեկն ե հանդիսանում
ագրոտեխնիկական ճշգրիտ կանոնները կոլխոզներ-
ի յերկարամյա փորձի հետ կապակցելը: Յեներով
դրանից, գյուղխորհուրդները պետք է կոլխոզներում
կազմվող բերքատվության խորհուրդներում ընտրեն

փորձված առաջավոր բամբակագործ-հարվածային-
ներին, վորոնց փորձն ու խորհուրդը պետք է հաշվի
առնվեն բամբակի բերքատվության բարձրացման հա-
մար մղվող հետազա պայքարում:

Բամբակային ռայոնների բոլոր գյուղխորհուրդ-
ների նախագահները այդ գեպքում պետք է հաս-
տատ հիշեն, վոր բամբակի վերաբերամբ հանդի-
պական պլաններ տալի արգելվում ե: Անցյալում
մենք փաստեր ենք ունեցել, յերբ գյուղխորհուրդ-
ները ստանալով, որինակի համար, ցանքսի 100 հեկ-
տար պլան և 700 ցենտներ բամբակ հանձննելու առա-
ջադրանք, հեկտարից 7 ցենտներ բերքի համար բոլ-
շևիկյան պայքար մղելու փոխարեն, ցանել են ավե-
լորդ 20 հեկտար և այդ ավելացրած տարածությու-
նից հանձննել ե 700 ցենտներ: Գյուղխորհուրդների
նման աչքակապության փաստերի գեմ պետք է
վճռական պայքար մղել, յերբ դաշտերի մոտով անց-
նող ճանապարհների կողերին ընկած յեղերքը ցան-
վում ու մշակվում են ավելի շատ, քան թե միջին
յեղած տարածությունը: Բոլոր գյուղխորհուրդների
նախագահները պետք ե հաստատ հիշեն, վեր աչխ-
կապության նվան փաստերի համար կառավարու-
թյունն անխնայութեն կպատճի:

5. Գարնանային գյուղատնտեսական կամպանիան
վճռական նեանակություն ունի յեվ Ս.ՍԽՆ գյու-
ղատնտեսական մյուս կարելոր նյուղի — սոցիալիս-
տական անանապահության համար:

Անանաբուծության պրոբեմը ներկայումս հան-
դիսանում է առաջնակարգ պրոբեմ: Ընկ. Ստալինի
ցուցմունքը XVII համագումարում այն մասին, վոր-

«Անանաբուծության գործը կունց ձեռքը
պետք է առնեն ամրացն կարակությանը, բո-



լոր մեր աշխատավորները, կուսակցականներն ու անկուսակցականները...»

— Այդ ամբողջովին Աղբբեջանին և վերաբերելում:

Կերային բազա ստեղծելու խնդիրը—պետք ե հիմնականում լուծվի հատկապես գարնանային կամպանիայի ժամանակ:

Գյուղխորհուրդներն առանձին ուշադրություն պիտի դարձնեն կերային խոտի, արմատապատճերի ցանքսի իրագործման վրա:

Գյուղխորհուրդի ուշադրության կենտրոնում պետք է դրված լինի անսասունների հոտի քանակի ավելացման հարցը, անսամբուծական սովորողների ու կոլխոզային ապրանքային ֆերմաների ամրապնդումը, բեղմնավորման կամպանիայի անցկացնելը (վորանց բեղմնավորելու չմնա վոչ մի կով, ձի և այլն), բարելավել անսասունների ցեղը ու կանոնավոր խնամել մատղաշները, նախապատրաստվել խոտհարքի, համայնքացրած անսասունները կազմակերպված կերպով յայլաղ ուղարկելու, քոչվոր-բամբակաբուծներին ամրացնելով (թողնել) բամբակենու դաշտերին—բամբակի մշակման և քաղի ժամանակ և այլն:

6. Բացի դրանց գյուղխորհուրդների տեսանկյուն պետք ե լինեն գյուղերի մեջ գտնվող ճանապարհների, կամուչների կարգի բերելը, նրանց իր ժամանակին նորոգելը և ճանապարհների կառուցման համար բաց թողված գումարների իրացումը:

7. Կուսակցությունը և կառավարությունը պահանջում են գյուղխորհուրդից վճռական պայքար մղել գարնանացանի և նրա նախապատրաստական աշխատանքներում կուլակային սաբուտաժի դեմ:

Այդ աշխատանքը գյուղխորհուրդը կարող ե հաջող կերպով տանել միայն հենվելով կոլխոզային, կոմյերիտական և կանանց ակտիվի վրա, ամենորյահամառ աշխատանք տանելով աշխատավոր մենատընտեսների մեջ:

Աղբբեջանի բոլոր գյուղխորհուրդները պետք ե լավ հիշեն, վոր գարնանային կամպանիայի հաջող կերպով տանելուց նշանակալից չափով կախում ունի կոլխոզնիկներին ունենոր դարձնելու, նրանց կուլտուրական, ունենոր կոլխոզային կյանքին հասցնելու խընդիրը:

Գյուղխորհուրդները պետք ե լայն կերպով բացարեն կոլխոզնիկներին ու մենատնտեսներին, վոր նոր որենքներ հրատարակելով, վորը հաստատ նորմաներ ե դնում պետությանը հացի, մսի, կաթի, յուղի, բրդի և այլն հանձնման համար, կոլխոզի և մենատնտեսի համար լայն հնարավորություն ե բացում լավ աշխատանքով ձեռք բերել բարձր բերքատվություն և ստանալ մեծ քանակությամբ բնամթերք՝ իր արտադրական և սպառողական կարիքները բարելավելու համար:

«Ամեն մի գյուղացի կոլխոզնիկ կամ մենատես հիմա հնարավորություն ունի մարդավայրել ապրելու համար, յեթե միայն նա ուղում ե աշխատել ազնվորեն, և վոչ թե լողորություն, թափառաշրջիկություն անել և կոլխոզային բարեկը չհափշտակել»: (ՍՏԱԼԻՆ)

ՎՈՐՈՒՔ ԵՆ ԱՅՆ ԼԾԱԿՆԵՐԸ, ՎՈՐՈՆՅԻՑ ՈԳՏԸՆԿՆՈՎ ԳՅՈՒՂՆՈՒՐՀՈՒՐԴ ԱՆՊԱՅԱՄԱՆ ԿԱՐՈՂ Ե ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅՈՒՄ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԸ ԱՊԱՀՈՎԵԼ:

Հիմական լծակը հանդիսանում է գյուղխորհրդի լայն մասսայական աշխատանքի ծավալումը։ Գյուղի խորհուրդը իր շուրջը պետք ե համախմբի կոլխոզների ու աշխատավոր մենատնտեմների ակտիվիստներին, կենդանացնի խորհրդի բոլոր սեկցիաների աշխատանքները, պատգամավորական խմբակներ կազմակերպի կոլխոզներում, սովորողներում և ՄՏԿ, պատգամավորական պոստեր կազմակերպի ամեն մի բրիգադում և նրանց միջոցով տանի իր աշխատանքները։

Մեր գյուղխորհուրդների նախագահները, դժբախարար, մինչև այսոր աշխատում են միայն իրենք, բայց այդ քիչ ե։ Գյուղխորհուրդի նախագահները պետք ե սովորեցնեն իրենց ակտիվին մասնակցություն ունենալ խորհուրդի ամենորյա աշխատանքներում, բարձրացնեն գյուղխորհրդի անդամների, ակտիվիստների հեղինակությունը, պայմաններ ստեղծեն աշխատանքի համար։

Գյուղխորհուրդը ակտիվիստներին, սեկցիայի անդամներին ու պատգամավորական խմբակների անդամներին պետք ե ամրացնի աշխատանքի զանազան տեղամասերին, լսի նրանց զեկուցումները և գործնական վորոշում ընդունի կամպանիայի ընթացքում յերեան բերած թերությունների անմիջապես վերացնելու համար։

Գյուղխորհրդի կողմից հանված բոլոր վորոշումները, նրա ամեն մի միջոցառումը պետք ե լինի կոնկրետ, պարտադիր կերպով ցուցաբերելով այն անձանց, վորոնք անհատապես պատասխանատու են այս կամ այն միջոցառումների, ժամկետների համար, վոր այդ միջոցառումները պետք ե կատարվեն։ Հակառակ դեպքում դժբախ կլինի ստուգել, թե իսկապես ինչպես գնում ցանքսի նախապատրաստությունը։

«Կանայք կոլխոզներում—մեծ ուժ են» (ՍՏԱԼԻՆ)։ Գյուղխորհուրդը կինակտիվը պետք ե կազմակերպի գաղանացին կամպանիայի խնդիրների շուրջը, լայն կերպով ներգրավի սեկցիաներում և պատգամավորական խմբակների աշխատանքներում կոլտընտեսութիներին, հարվածայնուհիներին, աշխատավոր մենատնտեսութիներին և նրանց միջոցով ապահովի կոլտնտեսութիների ու աշխատավոր մենատնտեսութիների կուտակենցաղային սպասարկումը ցանքսի ժամանակ, ընդարձակելով մանկական հիմնարկների, մանկական մասնակների, մանկապարտեզների և ուրցանցը։ Մանկամասուրների, մանկապարտեզների կազմակերպման հարցերը (շենք, սնունդ) պետք ե լինի հենց գյուղխորհրդի ուշադրության կենտրոնում, քանի վոր միայն դրանով գյուղխորհրդի նախագահը կարող ե ապահովել գարնանային գյուղատնտեսական կամպանիայում կանանց աշխատանքը։

Հաճախ դաշտերը հեռու յեն լինում գյուղերից։ Կոլխոզնիկներն ու կոլտնտեսութիները ահազին քանակությամբ ժամեր են կորցնում գյուղեց մինչև դաշտ գնալու և վերադառնալու համար։ Դա կտրում նրանց դաշտային աշխատանքներից և ուժեղ կերպով հոգնեցնում նրանց։

Դրանից խոռոչափելու և կոլխոզների կողմից ցանքսը վորոշ ժամկետում հաջող կերպով անցկացնելը ապահովելու համար խորհուրդները պետք ե կազմակերպեն դաշտային բրիգադային իջևաններ։

Դաշտային բրիգադային իջևանները հսարապության կտան արդունավետ կերպով ոգտագործել ժամանակի ամեն մի ժամը, լավ ոգտագործեն կոլխոզների քարշառութը և պահպանեն հասարակական սոցիալիստական սեփականությունը, բարձրացնեն աշխատանքա-

յին կարգապահությունը։ Դաշտային բրիգադային
իջևանները պետք ե կազմակերպվեն ցանքսի սկզբում։

Կուսակցությունն ու կառավարությունը խոչըն
նշանակություն են տալիս դաշտային իջևանների
կառուցմանը։ Դաշտային բրիգադային իջևանների
կառուցման վրա (վրան, ալաջուխ) խորհուրդները
պետք ե մեծագույն չափով ոգտագործեն տեղական
կառուցղական նյութերը և հենց կոլխոզնիկների բա-
նուժը։

Այդտեղ, դաշտային իջևաններում պետք ե կենտ-
րոնանա կուլտուրական-մասայական աշխատանքը.
բարձրաձայն ընթերցումը, դաշտային ընթերցա-
րանը, ռադիոն և այլն։

Այդտեղ, դաշտային իջևաններում պետք ե կազ-
մակերպվեն թեյատանների, կոռպերացիայի շարժա-
կան կայսանները։ Դաշտային իջևաններին անմիջա-
պես կից պետք ե կազմակերպվեն ու սարքավորվեն
մանկամատրները, մանկապարտեզները։ Այստեղ, դաշ-
տային բրիգադային իջևաններում պետք ե սարքա-
վորվեն բժշկական առաջին ոգնության կայանները։
Դաշտային աշխատանքների ժամանակ բրիգադների,
կոլխոզնիկների և աշխատավոր մենատեսների ա-
ռողջապահական բժշկական սպասարկման գործին խոր-
հուրդները պետք ե լուրջ ուշադրություն դարձնեն։

Դաշտային բրիգադային իջևանների կազմակեր-
պումը պետք ե լայն կերպով ժողովրդականացվի
խորհրդային, կոլխոզային ակաիվի մեջ։ Գյուղխոր-
հուրդների նախագահները պետք ե լայն կերպով
բացատրեն ամեն մի կոլխոզնիկի բամբակի հաջող
ցանքում դաշտային իջևանների նշանակությունն
ու ոգուարը։

Փորձը ցույց ե տալիս, վոր գյուղխորհուրդները,
վորոնք իրենց աշխատանքը տարել են հենվելով պատ-
գամավորների խմբակների ու սեկցիաների վրա,
կոլխոզային, կոմյերիտական և կանանց ակտիվի
վրա, վորոնք աշալուրջ են յեղել դեպի դասակարգա-
յին թշնամին—իր ժամանակին են կատարել հիմնա-
կան տնտեսական-քաղաքական առաջադրությունները
և այն ել վորակական լավագույն ցուցանիշներով։

Կուսակցության և կառավարության վորոշումները,
պլանները, արտադրական առաջադրությունները, բո-
լոր նախապատրաստական միջոցառումները պետք ե
լայն կերպով մշակվեն ու քննարկվեն ակտիվի, կոլ-
խոզների ժողովներում, մենատնտեսների հատուկ
արտադրական խորհրդակցություններում, գյուղխոր-
հրդի գյուղատնտեսական արտադրական խորհրդակ-
ցությունները, կոլխուրդների-հարվածայինուհի-
ների խորհրդակցություններում և այլն։

Գյուղխորհուրդը պետք ե կարողանա այնպես
անել, վոր ամեն մի կոլխոզնիկ, ամեն մի աշխա-
տավոր մենատնտես հասկանա ու յուրացնի գարնա-
նային կամպանիայի նշանակությունը, այն միջոցա-
ռումների նշանակությունը, վորը տարվում ե գյու-
ղում։

Գյուղխորհուրդների անդամները, պատգամավո-
րական խմբակները, սեկցիաները, գյուղատնտեսա
կան—արտադրական խորհրդակցություններն իրենց
աշխատանքով ու վերաբերմունքով դեպի հանձնարա-
րած գործը, հասարակական ունեցվածքը պետք ե
որինակ ծառայեն կոլխոզնիկների ու աշխատավոր
մենատնտեսների համար։

Խորհրդի անդամների, պատգամավորական խմբակ-
ների, սեկցիաների ոգնությամբ, ակտիվիտա-հարվա-

ծայլինների, կոմյերիտականների ու պիոններ-ջոկատների ոգնությամբ գյուղխորհուրդը պետք ե կազմա. կերպի սոցիալիստական դաշտերի, մեքենաների, գյուղատնտեսական ինվենտարի, սերմային ֆոնդերի պահպանությունը, անխնա ջախջախի դասակարգային թշնամու հասարակական սոցիալիստական ունեցվացքի թալանելու կամ փչացնելու փորձերը:

Աշխատանքային սոցիալիստական մեթոդները գարնանային կամպանիայում ել ավելի լայն գարգացում պիտի ստանան: Ստեղծելով նոր ու նոր հարգածային բրիգադներ, գյուղխորհուրդները պետք ե կազմակերպեն սոցմրցումը վոչ միայն կոլխոզային բրիգադաների, բրիգադիրների, կոլխոզնիկների միջև, այլ և սոցմրցման կանչեն միմյանց:

Մրցության վերելքի և հետև մնացողներին առաջքաշելու գործում գյուղխորհուրդները պետք ե կազմակերպեն կարմիր ու սև տախտակներու բացի դրանից, գյուղխորհուրդներին առաջադրվում ե դաշտերում, ամեն մի բրիգադի հողամասում կախել տախտակներ, վրան գրելով բրիգադիրի և լավագույն կոլխոզնիկ-հարգածայինների անունները: Նույնն պնել և աշխատավոր մենատնտեսների դաշտային հողամասերում:

Բամբակարուծական գյուղխորհուրդները պետք ե պայքարեն ԽՍՀՄ բամբակային յերկրորդ բազայի—Խորհրդային Ազգբեջանի հետագա գարգացման և ամրապնդման համար, Աղբբեջանը յեգիպտական բամբակի կարեռը բազայի կերպարանավոխելու համար:

Աշխատել իիս որացույցով յնվ կատարման խստագույն ստուգում—ահա թե ինչ պետք ե դնի իր աշխատանքի անկյունում գյուղխորհոդի ամեն մի նախագտի:

Գյուղխորհուրդները պետք ե հենց հիմա, անմիջավեր հոգ տանեն, վորպեսզի գարնանացանի կամպանիայի վերաբերմամբ յեղած ամեն մի միջոցառում բաշխված լինի որական առաջադրության: Գյուղխորհուրդների նախագահի պարտականության մեջ ե մտնում այդ առաջադրանքների կատարման ստուգումն կազմակերպել:

Լավ պլան կազմելը դեռևս քիչ ե—անհրաժեշտ ե ստուգել պլանը վաստորեն մինչև կոլխոզը, մինչև կոլխոզային բրիգադը, մինչև կոլխոզնիկն ու աշխատավոր մենատնտեսին համարը: Անհրաժեշտ ե խրստագույն անընդհատ ստուգում՝ նրա կատարման ընթացքին: Գյուղխորհուրդները պետք ե կազմակերպեն կատարման պարզ հսկողություն: Կատարմածի վերաբերմամբ խիստ հսկողությունը կտպահովի ազդա. նշանների իր ժամանակին տալը այս ինչի կամ այն ինչի թերակատարման մասին և կապահովեն նըանց անմիջական ուղղելը:

Անկյունի գլխին պետք ե դրվի ամեն մի ագրո-լիաղորի, ջրալիաղորի, գյուղատնտեսական արտադրական խորհրդակցության անդամի, խորհրդի անդամի, գյուղխորհոդի նախագահության անդամի և ամբողջ խորհրդի կատարելան ստուգումը յեվ անձնական պատավանակությունը:

Առաջավոր գյուղխորհուրդների նախաձեռնությամբ շատ տեղերում անցյալ գարնանը խորհուրդները կազմակերպեցին մինչցանքսային դաշտը դուրս գալու փորձերը: Դաշտը դուրս գալու այդ փորձերը մեծ ուգուտ տվեցին: Հառաջիկա գարնանացանի կամպանիայում այդ փորձը պետք ե գործադրեն բոլոր գյուղխորհուրդները: Դաշտ դուրս գալու փորձերը հնարախորհուրդները կտան անմիջապես դաշտում յերևան վորության կտան:

բերելու ցանքսի նախապատրաստության բոլոր թե-
ռությունները, կողման գյուղիսորհութիւններին ստուգե-
լու՝ ցանքսի իսկապես պատրաստ լինելը, կկազմա-
կերպեն գյուղական ակտիվի ուժերը:

1934 թ. գարնանային կանգանիան լայն գյու-
ղատնտեսական արտադրական կամպանիա եւ Այդ
կամպանիայում գյուղիսորհութիւն նախագահը պետք ե
հանրագումարը կազմի վոչ թե նրա վերջում, այլ
ոովարի նրանց հաշվի կամպանիայի համար պատ-
րաստվելու հենց ընթացքում և հենց գործի ընթաց
քում ել ուղղի բոլոր թերությունները:

Գյուղխորհութիւն ամեն մի նախագահ պետք ե հիշի,
վոր նրա աշխատանքի մասին կուսակցությունն ու
պետությունը նրան կդնահատեն այն չափով, վոր-
չափով նա ճիշտ ե տարել գարնանացանին նախա-
պատրաստվելու միջոցառուները, թե վորքան ճիշտ ե
կազմակերպել ցանքսը, թե վորքան լավ ե մոբիլի-
տացիայի յենթարկել մասսաներին, թե վորքան ամուր
ե կոփկել կոլխոզի ակտիվը, վորքան լավ ե պահպանել
հասարակական, սոցիալիստական ունեցվածքը:

Աղբբեջանի գյուղխորհուները բավականին փոր-
ձառություն են ձեռք բերել գարնանացանի նախա-
պատրաստվելու ու անցկացնելու գործում: Դրա հի-
ման վրա, հաշվի առնելով անցյալ կամպանիաների
սխալներն ու թերությունները, անշեղ կերպով տանե-
լով կուսակցության գլխավոր գիծը և Լենին-Ստալինի
ազգային քաղաքականությունը, անհաշտ կերպով
պայքարելով ամենայն տեսակի թեքումների ու հաշտ-
վողականության դեմ, գյուղական խորհուրդը պետք
ե ապահովի 1934 թ. գարնանացանի կամպանիայի
հաջող ընթացքը:



Թարգմանեց՝ Կ. Զալարի, Խմբադիր՝ Մեժլիմբեկով,
Տեխ.-խմբ. Կ. Թառլանյան

Baş Mətbuat Mədiriliyi Myakkılığı № 1457. Sifariş № 186. Tiraż 1000.
İstehsalata verilmiş 20/II-34 Cəpa verilmiş 3/III-34. Caplıstı 1st. Kaçırz
formatı 72×110. Azərnəşr mətsvəəsində basıldı. Bakı, Əli Bağramov
kyəsəsi, „26“-lar adına, Kitab Sarayı“

«Ազգային գրադարան



NL0203652

31.898

AMIQ TƏŞKİLAT ŞƏ'BƏSİ
1934-nçy il Jaz k. t. qampanjasında
Şuraların vəzifələri

Azərnəşg
Bakı—1934